# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք, գ.Շնող
Հեռ. 0253 6 35 34 , shnoghgyux@yandex.ru

N 146
*16 դեկտեմբեր 2013թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում 10.12.2013 թվականին կայացած Շնող համայնքի ավագանու թիվ 39-45 որոշումները

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

*Կատ. ՝ Համիկ Հանիսյան*

*Աշխ. Քարտուղար- 094-15-59-80*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2013թվականի N 39

## ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54.1 հոդվածով

Համայնքի ավագանին որոշում է

1. Ստեղծել Շնող համայնքի ղեկավարին կից համայնքի գլխավոր հատակագծի , քաղաքաշինական, բնապահպանական , կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների խորհուրդ հետևյալ կազմով

1. Հովիկ Սահակյան համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,
2. Կորյուն Շադինյան համայնքի ղեկավարի տեղակալ,խորհրդի նախագահի տեղակալ
3. Քնարիկ Մովսեսյան ,աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար
4. Բոշյան Վարուժան, ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
5. Արևշատ Ամիրջանյան, ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Լևոն Հոբոսյան, ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
7. Սերժիկ Մաշինյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Վարազդատ Մելիքսեթյան, համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
9. Արամ Բաբայան,համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 27-ի Շնող համայնքի ղեկավարին կից, Շնող համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին  N 30-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ [signature]

2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՈՐԳ

4. ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

6 ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2013թվականի N 40

## ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 54.1 հոդվածով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել Շնող համայնքի ղեկավարին կից համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Հովիկ Սահակյան համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,
2. Կորյուն Շահինյան համայնքի ղեկավարի տեղակալ,խորհրդի նախագահի տեղակալ
3. Մանյակ Ալիխանյան ,աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար
4. Արտակ Ազարյան, ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
5. Գևորգ Ավետյան, ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Արմեն Չիչակյան, ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
7. Գևորգ Պապյան, համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Բայրամյան Արտակ, համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 27-ի Շնող համայնքի ղեկավարին կից, Շնող համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին □ N 30-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Կողմ-6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ [signature]

2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻ

6 ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2013թվականի N 41

## ՇՆՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ և 77 -րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Շնողի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակում, հաստիքացուցակում և պաշտոնային դրույքաչափերում կատարել փոփոխություն

2. Ուժը կորցրած ճանաչել Շնող գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 2 -ի <<Շնողի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 20 որոշումը.

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2013 թվականի դեկտեմբերի 11-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՋԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՒՇԱՏ
3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՒՈՐԳ
4. ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
6. ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Շնողի գյուղական համայնքի ավագանու
2013թ. Դեկտեմբերի 10 –ին N41-Ա_ որոշման

# ՇՆՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 22
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 205800 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 161200 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 131600 |
| Իրավախորհրդատու | 1 | 59600 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 147100 |
| Աշխատակազմի Գլխավոր մասնագետ -- գլխավոր հաշվապահ | 1 | 140700 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 3 | 70100 |
| 1-ին կարգի մասնագետ | 3 | 63900 |
| 2-րդ կարգի մասնագետ | 2 | 59600 |
| | ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | |
| Գործավար --օպերատոր | 1 | 59600 |
| վարորդ | 1 | 79400 |
| Ջրվար | 2 | 79400 |
| Հաշվետար | 2 | 59600 |
| Հավաքարար | 1 | 59600 |
| բանվոր | 2 | 59600 |
| օժանդակ բանվոր | 0.5 | 59600 |
| ցրիչ | 0.5 | 59600 |

Շնողի գյուղապետ՝ Հ. Սահակյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2013թվականի N 42-Ն

## ՇՆՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8 և 10 հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>>ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 34 հոդվածի 4-րդ մասով

Համայնքի ավագանին որոշում է`

1.Հաստատել Շնող գյուղական համայնքի տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

2.ՈՒժը կորցրած ճանաչել <<Շնող գյուղական համայնքի տարածքում 2013թվականի տեղական տուրքերի և դրույքաչափերի մասին>> ավագանու 11.12.2012թվականի թիվ 31-Ն որոշումը>

3.Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Արդարադատության նախարարություն` պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՒՇԱՏ
3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՒՈՐԳ
4. ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
6. ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շնող գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 10 -ի թիվ 42 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ 12000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

3000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

5000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

5000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 170000_դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝_30000_դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000_դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000_դրամ.

5)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական

հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000_դրամ.

6)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 10000_դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 250000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 500000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 500 դրամ:

Հայաստանի Հանրապետության հմայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ ______50000_դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝______5000 դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 3000 դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝2000 դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել` 3000 դրամ:

Համայնքի ղեկավար` /ՀՈՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ /

10 դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2013թվականի N 43

### ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19 կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.1 մանկապարտեզի վարձավճար-3000դրամ

1.2խմելու ջրի վարձավճար - 500դրամ

1.3արվեստի դպրոց՝

ա/ դաշնամուրային բաժին- 1500դրամ

բ/ ժողգործիքների բաժին - 1000դրամ

գ/ գեղարվեստի բաժին - 1000դրամ

4. տեղեկանքների տրամադրում- -100դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ

2.ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐՇԱՏ

3.ԱՎԵՏՅԱՆ ԳևՈՐԳ

4.ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

5.ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

6 ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2013թվականի N 44

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 06-088-0289-0001-024հա, 06-088-026-0,5հա, 06-088-288-001-0,5հա 06-088-277-001-0,3հա ծածկագրերից, գործառնական նշանակությունը ՝ այլ հողեր , գյուղատնտեսական նշանակության հողամասեր թույլատրել ներկայցնելու աճուրդ-վաճառքի, մեկնարկային գինը՝ 1քմ- 41,5դրամով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՒՇԱՏ
3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՒՈՐԳ
4. ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
6. ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շնող, 0253 6 35 34, shnoghgyux@yandex.ru

**Ո Ր Ո Շ Ու Մ**

10 դեկտեմբերի 2013թվականի N 45

«ՕՐԱՆԺ_ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ_ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ-ի մասին»» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20 կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Շնող համայնքի վարչական տարածքից /ջրամբարին հարակից / 100քմ հողատարածք , վարձակալական հիմունքներով հատկացնելու «Օրանժ- Արմենիա»ՓԲԸ-ին՝ բջջային հիմնական կայանի տեղակայման նպատակով

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ
2. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՐԵՒՇԱՏ
3. ԱՎԵՏՅԱՆ ԳԵՒՈՐԳ
4. ԲՈՇՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
6. ՉԻՉԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՍԱՀԱԿՅԱՆ